ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների
լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նստաշրջան Դուբնայում
/2009 թ. մարտի 27-28/

2009 թվականի մարտի 24-25-ը ՌԴ Դուբնա քաղաքում կայացավ Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) անդամ պետությունների ֆինանսական հանձնաժողովի նիստը, իսկ մարտի 27-28-ը՝ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի հերթական նստաշրջանը:

Նիստերին մասնակցելու նպատակով Դուբնա էին մեկնել ՄՀՄԻ-ում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանը, ինչպես նաեւ ՄՀՄԻ ֆինանսական հանձնաժողովում հայաստանյան ներկայացուցիչ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության պետ Լ. Մարդոյանը:

Նիստերում քննարկվող հիմնական թեմաներն էին ՄՀՄԻ 2008 թվականի աշխատանքային արդյունքների ամփոփումը, 2009 թվականին Ինստիտուտի ծրագրերը, ինչպես նաեւ՝ 2010-2016 թթ. ՄՀՄԻ 7-ամյա զարգացման պլանի հիմնական ուղղությունները:

Ֆինանսական հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվեցին նաեւ Ինստիտուտի 2007 թվականի ֆինանսական գործունեության աուդիտի արդյունքները, 2008 թվականի ՄՀՄԻ բյուջեի կատարողականը:

Ֆինանսական հանձնաժողովի անդամները գոհունակությամբ նշեցին, որ 2008 թվականի ընթացքում Ինստիտուտի բյուջեի կատարողականը կազմել է 104 %, իսկ հիմնարար սարքավորումներն արդյունավետ աշխատել են շուրջ 10000 ժամ, ինչը համապատասխանում է նախատեսված ծրագրերին:

Ֆինանսական հանձնաժողովը քննարկեց եւ հավանության արժանացրեց նաեւ 2010-2016 թթ. ՄՀՄԻ զարգացման պլանը, եւ ՄՀՄԻ տնօրինությանն հանձնարարվեց Զարգացման պլանը ներկայացնել ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի հաստատմանը 2009 թվականի նոյեմբերին:

Լիազոր ներկայացուցիչների հանձնաժողովի նիստում հավանություն տրվեց նաեւ ՄՀՄԻ վարած միջազգային համագործակցության, նոր գործընկեր-պետությունների ներգրավման ծրագրերին:

Նիստերի ընթացքում հնչեցին նաեւ գիտական զեկույցներ՝ «ԻՌԵՆ-1՝ ընթացքը եւ դինամիկան» եւ «Ռադիոկենսաբանական արագացուցիչները ՄՀՄԻ ծանր իոնների արագացուցիչներում՝ խնդիրները եւ հեռանկարները» թեմաներով:

Հերթական նստաշրջանը որոշվեց անցկացնել 2009 թվականի նոյեմբերի Ղազախստանում: